ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 152-Ա
04 ՀՈՒԼԻՍ 2022Թ
ՄԱՅԻՍ ՆԱԶԱՐՅԱՆԻՆ ԵՎ ՆԵԼԼԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2335 որոշման 3-րդ և 7-րդ կետերով և հիմք ընդունելով կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ժ.Անդրեասյանի 2022 թվականի հունիսի 30-ի թիվ 02/09.1/15434-2022 գրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Գետափի միջնակարգ դպրոց պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի տնօրեն Մայիս Նազարյանին և «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Նելլի Հարությունյանին 2022 թվականի հուլիսի 6-ին գործուղել ք.Երևան, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն՝ «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի տարակարգի շնորհման հանրապետական հանձնաժողովի ձևավորման և գործունեության, տարակարգ ստացած ուսուցիչներին հավելավճար տրամադրելու կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման և «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի մասնագիտական չափանիշները սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանի նախագծերի հանրային քննարկումներին մասնակցելու: Վերադարձի օրը՝ 2022 թվականի հուլիսի 7-ին:
2. Մայիս Նազարյանի և Նելլի Հարությունյանի գործուղման հետ կապված ծախսերը (օրապահիկ, գիշերավարձ և ճանապարհածախս) կատարել համապատասխանաբար «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Գետափի միջնակարգ դպրոց պետական ուսումնական հաստատություն» և «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ների ֆինանսական միջոցների հաշվին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չափով և կարգով:
3. Մայիս Նազարյանին և Նելլի Հարությունյանին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել հաշվետվություն՝ գործուղման հետ կապված ծախսերի և գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ:

7/4/2022

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ